ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-20/19»

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «20» հունվար 2021թ.

Ծաղկաձորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ար-Բե>> հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն Գ.Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 23.12.2020թ. կնքված N «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-20/19» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանգրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով : Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կնքված են հայերեն լեզվով , 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002166
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Ար-Բե>>հայ-բելառուսական առևտրի տուն ՍՊԸ
ք.Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 02247573
Հ/Հ 2472302324040000
Գլխավոր տնօրեն Գ.Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«23 » դեկտեմբեր 2020թ. կնքված
«ԾՔ-ԳՀԱՊՁԲ-20/19» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ
կատարելու նպատակով <<20>> 01 2021թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 34131220 | Բազմաֆունկցիոնալ անիվավոր տրակտոր իր շերեփով, խոզանակով և ավազ ցանող կցորդիչով | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 | 13220000 |

**ԳՆՈՐԴ**
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002166
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Ար-Բե>>հայ-բելառուսական առևտրի տուն
ՍՊԸ
ք.Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 02247573
Հ/Հ 2472302324040800
Գլխավոր տնօրեն Գ.Հովհաննիսյան
Կ.Տ